ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-18-Ո-64
2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 94-րդ հոդվածի 1-ին մասով, Կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 179-Ն որոշումը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել 2019 թվականի պետական բյուջեով հատկացված «Սոցիալական փաթեթի ապահովում» 1015 ծրագրի «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 12001 միջոցառմամբ նախատեսված՝

1) Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Վճռաբեկ դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 3-ի.

4) Վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 4-ի.

5) Վերաքննիչ վարչական դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 5-ի.

6) Վարչական դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 6-ի.

7) Սնանկության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 7-ի.

8) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 8-ի.

9) Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 9-ի.

10) Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 10-ի.

11) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 11-ի.

12) Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 12-ի.

13) Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 13-ի.

14) Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 14-ի.

15) Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 15-ի.

16) Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 16-ի.

17) Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 17-ի.

18) Դատական կարգադրիչների ծառայության 2019 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 18-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

2019թ. մարտի 25
ք. Երևան